



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ ԵՒ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՅ ԿԵՂՐՈՆԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, 12 Յուլիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ իր պատգամը:

Ս. Պատարագի աւարտին, կ.ե. ժամը 2-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը պաշտօնական բացումը պիտի կատարէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից կառուցուած, Կլենտէյլի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» Երիտասարդական Հայ Կեդրոնին:

Ուրբաթ, 10 Յուլիսի երեկոյեան, ի նպաստ Կլենտէյլի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» Երիտասարդական Հայ Կեդրոնին, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Renaissance սրահին մէջ:

Ձեռնարկին ներկայ պիտի ըլլան Հոգշ. Ս. Վաղինակ Վրդ. Մելոյեանն ու Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւները:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH AND THE OPENING OF THE YOUTH CENTER

On Sunday, July 12th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and deliver the sermon.

At 2:00 p.m., the Prelate will conduct the opening of the "Krikor and Mariam Karamanoukian" Youth Center adjacent to the Church.

A banquet to benefit the new youth center will take place on the evening of Friday, July 10th, at Renaissance Hall in Glendale. Very Rev. Fr. Vaghinag Meloian and the pastors of St. Mary's Church will attend.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՕՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ
ՆՈՐԹ ՀՈՒԿՈՒՄԻ ՃՈՒԽԻՆ

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ
ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 19 Յուլիսը, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան եւ Վարդավառի տօնն է:

Այս առիթով, Նորթ Յոլիվուտի Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքը պիտի ապրի պատմական օր մը, ընդունելով Առաջնորդ Սրբազան Յօր անդրանիկ այցելութիւնը:

Արդարեւ, այդ օրը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցանէ եկեղեցւոյ մէջ ու պիտի ուղղէ իր պատգամը:

Ս. Պատարագը տեղի պիտի ունենայ կէսօրէ ետք ժամը 2ին: Եկեղեցւոյ հասցէն է՝ St. Paul Assyrian Chaldean Catholic Church, 13050 Vanowen Street, N. Hollywood.

Յաւարտ Ս. Պատարագին, եկեղեցւոյ կից սրահին մէջ տեղի պիտի ունենայ պատշաճ յայտագիր եւ հիւրասիրութիւն:

PRELATE'S FIRST OFFICIAL VISIT TO THE NORTH HOLLYWOOD PARISH

EPISCOPAL DIVINE LITURGY ON THE FEAST OF TRANSFIGURATION

Sunday, July 19th, is the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will pay his first official visit to the North Hollywood Parish, where he will celebrate Divine Liturgy and deliver the sermon.

Services begin at 2:00 p.m. and take place at St. Paul Assyrian-Chaldean Catholic Church located at 13050 Vanowen St. in North Hollywood.

A special program and reception will follow at the Church social hall.

ՀՈԳՇ. Տ. ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԸ ԿՈՉՈՒԻ ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԻՆ ՄԷՋ

Այսու ուրախութեամբ կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի տնօրինումով, Արեւմտեան մեր Թեմին մէջ ծառայութեան կը կոչուի Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Նկատի ունենալով Թեմիս աշխատանքի դաշտերուն ընդարձակումն ու երիտասարդ հոգեւորականներու կարիքը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան ու ժողովականութիւնը խնդրամատոյց եղած էին Վեհափառ Յայրապետին, որպէսզի երրորդ միաբան մը եւս առաքէ մեր Թեմը:

Վեհափառ Յայրապետին տնօրինումով, Յայր Վաղինակ մեր Թեմը ծառայութեան կ'առաքուի որոշ ժամանակի համար: Ան Լոս Անճելըս ժամանեց Երեքշաբթի, 7 Յուլիսին, ու յառաջիկայ շաբաթէն սկսեալ, ծառայութեան պիտի

կոչուի Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ծխական համայնքէն
Ներս, Զոգեւոր Զովիւ Տ. Աւետիս Բիւյ. Թորոսեանի հետ:



Յայր Վաղինակ ծնած է Գամիշլի, Սուրիոյ հիւսիսային շրջանը: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրին մէջ: Ան 1986ին դարձած է Կաթողիկոսութեան դպրեվանքի սան: 1994ին, կուսակրօն քահանայ ձեռնադրուած է հոգելոյս Մեսրոպ Արք. Աշճեանի ձեռամբ: Կաթողիկոսութեան յարկին տակ, ան ծառայած է Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին մէջ, եղած է մայրավանքի փոխ լուսարարապետ, ապա նաեւ »Թռչնոց Բոյն«ի, Ազգ. Ծերանոցի ու Ազգ. Բուժարանի հոգեւոր խորհրդատու:

2001էն մինչեւ 2003, ծառայութեան կոչուած է Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին մէջ, ուր նաեւ հետեւած է բարձրագոյն ուսման, Փիթցալըրկի աստուածաբանական համալսարանին մէջ: 2003ին ստացած է վարդապետական գաւազան: 2006ին, նշանակուած է Զահանայից Դասարանի տեսուչ: Իր հետաքրքրութեան աշխարհը եղած է

Աստուածաշունչն ու անոր մեկնութիւնը: Զրատարակած է 12 գիրք, որոնք հոգեւոր քննութիւնն են:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր ու ժողովականութեան, բարի գալուստ կը մաղթենք Յայր Սուրբին: Նշենք, որ Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Յայր Սուրբը յառաջիկայ Կիրակի, 12 Յուլիսին, պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Զովիւնոսի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

VERY REVEREND FATHER VAGHINAG MELOIAN CALLED TO SERVE AT THE WESTERN PRELACY

We hereby announce to our faithful community that by the ordinance of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, Very Rev. Fr. Vaghinag Meloian, a member of the Cilician Brotherhood, has been called to serve at the Western Prelacy.

Given the ever-expanding activities of the Prelacy and the need for young clergy members, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils had appealed to His Holiness to appoint a third clergy member to serve alongside Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

Very Rev. Fr. Vaghinag Meloian arrived in Los Angeles on Tuesday, July 7th, 2009, and he will soon begin his service at St. Gregory Church in San Francisco, alongside Rev. Fr. Avedis Torossian.

Fr. Vaghinag was born in Kamishli, Syria, where he received his primary education. He was enrolled at the Seminary of the Catholicosate in 1986 and

ordained a celibate priest in 1994 by H.E. Archbishop Mesrob Ashjian of blessed memory. Fr. Vaghinag has served in the Christian Education Department of the Catholicosate of Cilicia, was vice-sacristan of the Mother Cathedral in Antelias, and the spiritual counselor of the Birds' Nest Orphanage, as well as the Armenian Aging Home and Sanatorium.

From 2001 to 2003, Fr. Vaghinag served at the Eastern Prelacy during which time he attended the Pittsburgh Theological Seminary. In 2003, he received the rank of *vartabed*.

In 2006, he was assigned director of the priesthood training department at the Catholicosate. He has published 12 books on Biblical themes.

By the ordinance of the Prelate, Fr. Vaghinag will be celebrating Divine Liturgy for the first time within the Prelacy on Sunday, July 12th, at St. Garabed Church in Hollywood.

We welcome Fr. Vaghinag and wish him a successful tenure at the Western Prelacy.
